

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՐԲԵՐՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2015 թվականի հունվարի 15-ին Նոր Խարբերողի գյուղական համայնքում տեղի ունեցավ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Կ. Կակոյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Գ. Աբրահամյանը:

Մասնակցում էին Արարատի մարզպետարանի ներկայացուցիչ Ա. Ասատրյանը, ավագանու անդամներ, համայնքի ղեկավարի աշխատակազմը, մշակույթի տան, գրադարանի, նրաժշտական և հանրակրթական դպրոցի տնօրեններն ու աշխատակիցները, համայնքի բնակիչներ:

ԼՄԵՅԻՆ- Արարատի մարզի Նոր Խարբերող համայնքի ղեկավար Կ. Կակոյանի հաշվետվությունը 2014 թվականի նրկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՁԱՆԱԳՐՎԵՑ, որ

2014 թվականի նրկրորդ կիսամյակում Նոր Խարբերողի գյուղական համայնքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Գյուղապետարանը բնակիչներից ստացել է 313 դիմում, համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրագված խնդիրները քննարկվել են համայնքի ղեկավարի աշխատակազմի և ավագանու նիստերի ժամանակ և տրվել են համապատասխան լուծումներ:

Գյուղապետարանը բնակիչներին տրամադրել է շուրջ 3800 տեղեկանք, ստացել 101 պաշտոնական նամակ մարզպետարանից և տարբեր կազմակերպություններից, դրանք քննարկվել են սահմանված ժամկետներում, տրվել պատասխաններ:

2014 թվականի նրկրորդ կիսամյակում համայնքի վարչական տարածքում պարբերաբար իրականացվել են սահմաքրման աշխատանքներ, մաքրվել են ոռոգման առուները, փողոցները: Շաբաթը նրկու անգամ կատարվում է աղբահանություն:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափազրման, սահմանների ճշտզրման և հողատեսքերի փոփոխման և ձևակերպման աշխատանքներ:

Համայնքի ղեկավարի ազակցությամբ վերադասից ստացվել և համայնքի բնակիչներին է բաժանվել թունաքիմիկատներ, սերմացուներ, պարարտանյութեր:

2014 թվականի նրկրորդ կիսամյակում ընթացքում համայնքի բյուջեի սնվական նկամուտները ըստ հետևյալ հարկատեսակների կազմել են՝

ա/ հողի հարկ՝ 1215.4 հազար դրամ.

բ/ գույքահարկ՝ 9896.8 հազար դրամ.

գ/ տնդական տուրք՝ 1145.5 հազար դրամ.

դ/ ոչ հարկային նկամուտներ՝ 4363.0 հազար դրամ:

Համայնքում իրականացվել են մի շարք միջոցառումներ.

Հանդիսավորությանը նշվել են Բանակի, Կանանց, Աշխատանքի, Հայթանակի և խաղաղության, Հանրապետության, Սահմանադրության և Անկախության օրերը:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է 2455.0 հազար դրամ ֆինանսական աջակցություն.

Հուղարկավորությանն նպատակով՝ 1510.0 հազար դրամ.

Համայնքում նախադարձական դաստիարակությունը պատշաճ կազմակերպելու համար հատկացվել է 15040.0 հազար դրամ.

Երաժշտական դպրոցին՝ 7030.6 հազար դրամ.

Աղբահանման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել է՝ 600.0 հազար դրամ.

Գազի ֆիկացվել են համայնքի 17-րդ և 19-րդ փողոցները:

« Զոնալ » թաղամասում կատարվել են Արտաշատի ջրանցքի 8-րդ բաժանարարի վերանորոգման աշխատանքներ:

Համայնքի հիմնախնդիրներից է գյուղամիջյան ճանապարհների բարեկարգումը, խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերի վերանորոգումը, նոր թաղամասերում էլեկտրական ենթակայանների տնդադրումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ.ԿԱԿՈՅԱՆ

